Եվրոպական ներդրումային բանկը և

# Արևելյան հարևանության երկրները



European Investment Bank

The EU bank

# ԵՆԲ-Ն ԵՄ-Ի ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ

Եվրոպական ներդրումային բանկը կենտրոնացնում է իր գործունեությունը սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների, մասնավոր հատվածի զարգացման և կլիմայի պահպանմանն ուղղված գործողությունների վրա: Մենք ֆինանսավորում ենք ծրագրեր, որոնք նպաստում են տարածաշրջանի կենսունակությանը և արդիականացմանը: Մեր ներդրումներից օգտվում են Արևելյան հարևանության երկրների քաղաքացիները՝ ամրապնդելով այդ երկրների հարաբերությունները Եվրոպական միության և դրա անդամ պետությունների հետ:

Մենք ֆինանսավորել ենք երկարաժամկետ ներդրումային ծրագրեր ԵՄ-ի Արևելյան հարևանության երկրներում 2009 թվականից սկսած:

## ԻՆՉ ԵՆՔ ՄԵՆՔ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ

Մենք ներդնում ենք մեր կազմակերպության ճարտարագետների և տնտեսագետների փորձը և փորձառությունը՝ օգնելով մշակել և գնահատել լավագույն որակյալ ծրագրերը: Որպես վարկունակության բարձր վարկանիշ ունեցող, քաղաքականության վրա հիմնվող ԵՄ ֆինանսական հաստատություն, մենք առաջարկում ենք գրավիչ ֆինանսական պայմաններ, ինչպիսիք են ծրագրերին հարմարեցված մրցունակ տոկոսադրույքները և վարկերի տևողությունները: Եվրոպական միության և այլ դոնորների հետ մեր գործընկերությունների միջոցով մենք կարող ենք տրամադրել դրամաշնորհներ՝ մեր կողմից ֆինանսավորվող ծրագրերի զարգացման ազդեցությունն առավել բարելավելու նպատակով:

Արևելյան հարևանության երկրներում ծրագրերի մեծ մասը ԵՆԲ-ն ֆինանսավորում է ԵՄ-ի Արտաքին վարկավորման մանդատի շրջանակներում: Այս մանդատը ԵՆԲ-ին տրամադրում է ԵՄ երաշխիք՝ զարգացնելու մասնավոր և պետական հատվածների ծրագրերը:




**ԵՆԲ-ի ներդրումներն ըստ երկրների (2009 թվականից սկսած)**

**Արևելյան հարևանության հետ ստորագրված վարկերը (2009-2018 թվականներ)**



# ՄԵՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Արևելյան հարևանության տարածաշրջանում ԵՆԲ-ն կենտրոնացնում է իր գործունեությունը որակյալ աշխատատեղեր ստեղծելու և տնտեսական աճը խթանելու, արդյունաբերությունը և ենթակառուցվածքները զարգացնելու, նորարարությանը աջակցելու և մատչելի ու մաքուր էներգիա ապահովելու վրա: Կլիմայի պահպանմանն ուղղված գործողությունները, Փարիզի համաձայնագրին համահունչ, հանդիսանում են ԵՆԲ-ի ամբողջ վարկավորման գործունեության գերակայությունը: Մեր ֆինանսավորման միջոցով մենք հանդես ենք գալիս որպես խթանիչ անհրաժեշտ ֆինանսավորում ներգրավելու համար՝ ապահովելու ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակները (ԿԶՆ-ներ) 2030 թվականի համար:

**Աջակցություն տարածաշրջանին ԿԶՆ-ներին հասնելու գործում (վարկային համաձայնագրերի ստորագրում, 2015-2018 թվականներ)՝**

**7 054 դասասենյակի նստարաններ** վերանորոգված շենքերում բուհերի ուսանողների համար

**12 միլիոն մարդ** օգտվել է բարելավված ջրամատակարարումից և ջրահեռացումից

**158 000 տնային տնտեսություններին** հասանելի է մաքուր էլեկտրականությունը

**370 000 աշխատատեղ** է պահպանվել փոքր բիզնեսում, միկրոձեռնարկություններում և միջին կապիտալիզացիա ունեցող ձեռնարկություններում

տարեկան **21 միլիոն ուղևորություն** բարելավված հանրային տրանսպորտով





# ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Արևելյան գործընկերությունը ներդրվել էր 2009 թվականին որպես համատեղ քաղաքականության նախաձեռնություն, որը ներգրավում է Եվրոպական միությունը, դրա անդամ պետությունները և Արևելյան Եվրոպայի վեց գործընկերոջ՝ Հայաստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Վրաստանը, Մոլդովայի Հանրապետությունը և Ուկրաինան:

Եվրոպական միությունն աշխատանք է տանում իր արևելյան կողմում գտնվող երկրներում՝ կայուն զարգացումը և քաղաքացիների բարօրությունը խթանելու նպատակով: ԵՆԲ-ն աջակցում է Արևելյան գործընկերության 2015 թվականի գագաթնաժողովի նպատակներին, որոնք ընդգծեցին մինչև 2020 թվականը շոշափելի արդյունքներ ապահովելու համար չորս առանցքային գերակայությունները՝

1. **Ավելի ուժեղ տնտեսություն՝** տնտեսական զարգացում և շուկայի հնարավորություններ
2. **Ավելի ուժեղ կապ՝** միացնելով մարդկանց և վայրերը, էներգաարդյունավետություն, շրջակա միջավայր և կլիմայի փոփոխություն
3. **Ավելի ուժեղ կառավարում՝** հաստատությունների ամրապնդում և լավ կառավարում
4. **Ավելի ուժեղ հասարակություն՝** շարժունակություն, պրոֆեսիոնալ հմտությունների և կապերի ձևավորում

**2009 թվականի Արևելյան գործընկերության մեկնարկից սկսած ԵՆԲ-ն տրամադրել է 8,8 միլիարդ եվրո՝ տարածաշրջանում աջակցելով 96 ծրագրի:**



# ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՆԲ-ն աշխատում է զարգացնել ավելի ուժեղ և ավելի դիվերսիֆիկացված տնտեսություններն Արևելյան գործընկերության տարածաշրջանում: Մենք մասնավորապես ակտիվ ենք եղել փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ների) և միկրոձեռնարկությունների կարիքները ֆինանսավորելու, ներդրումներ ներգրավելու, աշխատատեղեր և առևտրի հնարավորություններ ստեղծելու հարցում: Մենք տրամադրել ենք վարկային գծեր՝ ներառյալ տեղական արժույթներով և երաշխիքներ փոքր բիզնեսներին, որոնց ընդհանուր գումարը սկսած 2009 թվականից կազմել է 2,7 միլիարդ եվրո:

Բանկի աջակցությունը փոքր բիզնեսներին և միջին կապիտալիզացիա ունեցող ձեռնարկություններին հեշտացվում է Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրով (ԽՀԱԱՀ), ՓՄՁ-ների ուղղակի աջակցության մեխանիզմով և InnovFin նախաձեռնությամբ, որը տրամադրում է թե խորհրդատվական ծառայություններ, թե ֆինանսական գործիքներ:

ԵՆԲ-ն աջակցել է արդյունաբերությանը մի քանի կորպորատիվ ծրագրերի միջոցով, որոնց արժեքը կազմել է 590 միլիոն եվրո 2009 թվականից սկսած: Բացի այն որ Բանկն օգնում է ընկերություններին աճել, այն նաև աջակցում է, որ նրանց պայմանագրերի տենդերները, շրջակա միջավայրի պաշտպանությունը և տեխնիկական մասնագրերը համապատասխանեն ԵՄ-ի ստանդարտներին:

### Ծրագրի ամփոփ նկարագիր.

- ԵՆԲ-ն տեղական արժույթով ֆինանսավորում է տրամադրել փոքր բիզնեսների և միջին կապիտալիզացիա ունեցող ձեռնարկությունների համար Procredit բանկին Ուկրաինայում՝ **60 միլիոն եվրո** արժողությամբ տեղական արժույթով վարկի միջոցով: Այն նաև տրամադրել է փոքր բիզնեսի վարկային երաշխիք **2,6 միլիոն եվրո** արժեքով ԽՀԱԱՀ-ի միջոցով Վրաստանի TBC բանկի համար՝ ապահովելով շահավետ պայմաններ և գրավի նվազեցված պահանջներ ՓՄՁ վարկերի համար:

- ԵՆԲ-ն **250 միլիոն դոլարի** վարկ է տրամադրել Ուկրաինայում մի մեծ ընկերության, որտեղ աշխատում է ավելի քան **14 000 մարդ**: Ընկերությունը, իր հերթին, ենթակապալառու է վերցրել **40 փոքր բիզնեսների՝** իրականացնելով գյուղատնտեսական ենթակառուցվածքի և բուսական յուղի ժամանակակից գործարանի կառուցմանն ուղղված ծրագիր: Ծրագիրն օգնեց ապահովել կայուն եկամուտ տեղացի ֆերմերների համար և օգուտ բերեց ավելի լայն համայնքին:



## TEN-T ՑԱՆՑԸ.

ԵՆԲ-ն հանձնառու է ընդլայնված Տրանս եվրոպական տրանսպորտային ցանց կառուցելու ֆինանսավորմանը՝ տրանսպորտային ցանց, որն իրար կկապի Արևելյան գործընկերության տարածաշրջանի երկրներին, և կկապի տարածաշրջանը ԵՄ-ի հետ: TEN-T ցանցը, որը կբարելավի սահմանի սահմանային և կնորացնի առկա ենթակառուցվածքը խոչընդոտները վերացնելու համար, ներառում է նոր և առկա ճանապարհների, երկաթուղիների, նավահանգիստների, օդանավակայանների և լոգիստիկ կենտրոնների կառուցում և վերականգնում: Բացի դրանից, ԵՆԲ-ն լրացուցիչ կերպով կաջակցի ճանապարհային երթևեկության անվտանգությանը՝ Արևելյան գործընկերության մի քանի երկրում խորհրդատվական աջակցության և ներդրումների միջոցով:

# ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ԿԱՊ

## ԿԱՊԵԼՈՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԲԱՐԵԼԱՎՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑՈՎ

Տրանսպորտն առանցքային է աճի և մրցունակության համար: Որպես ԵՄ բանկ՝ ԵՆԲ-ն ֆինանսավորում է ենթակառուցվածքային ծրագրեր, որոնք բարելավում են կապը Արևելյան գործընկերության տարածաշրջանի և Եվրոպական միության միջև՝ լինեն դրանք երկաթուղին, ավտոմոբիլային ճանապարհները կամ ջրային ուղիները: 2009 թվականից սկսած ԵՆԲ-ն ֆինանսավորել է տրանսպորտային ենթակառուցվածքի 25 ծրագիր 3,1 միլիարդ եվրո արժողությամբ:

**Տրանսպորտային վարկեր ըստ տեսակների (2009-2018 թվականներ)**



## ԴԱՐՁՆԵԼՈՎ ԷՆԵՐԳԻԱՆ ԱՎԵԼԻ ԿԱՆԱՉ, ԱՎԵԼԻ ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ԱՎԵԼԻ ԱՊԱՀՈՎ

ԵՆԲ-ն աջակցում է ներդրումներն էներգաարդյունավետության ոլորտում՝ խթանելով էներգակայունությունը և մատակարարման անվտանգությունը և ուժեղացնելով վերականգնվող էներգիայի օգտագործումը՝ ջերմոցային գազի արտանետումները կրճատելու նպատակով: Մեր ներդրումներն ուղղված են ոչ միայն էներգետիկ կապերի ընդլայնմանը, ինչն օգնում է ստեղծել ինտեգրված և կայուն էներգաշուկա ամբողջ Եվրոպայում, այլ նաև էներգիայի ավելի արդյունավետ օգտագործմանը, որը նվազեցնում է արտանետումները և կրճատում է էներգիայի ծախսերը:

### Ծրագրի ամփոփ նկարագիր.

- **80 միլիոն եվրո՝ 158 կիլոմետր** երկարությամբ նոր հաղորդագծերի համար, որոնք կօգտագործվեն Մոլդովայի Հանրապետությունը Ռումինիային և ԵՄ-ի էլեկտրականության շուկան կապող **600 մեգավատտանոց փոխկապակցված** ցանց ստեղծելու համար: Այս ծրագիրը կօգնի բազմազանեցնել Մոլդովայի էներգետիկ ռեսուրսները և բարելավել էներգետիկ անվտանգությունը:

- **7 միլիոն եվրո՝** Երևանի էներգաարդյունավետության ծրագրի շրջանակներում մոտ **150 մանկապարտեզ** նորոգելու համար, որի արդյունքում շենքերը կամրապնդվեն սեյսմիկ տեսանկյունից և կբարելավվի դրանց էներգաարդյունավետությունը (տանիքի մեկուսացում, նոր խնայող ջեռուցման սարքավորումներ, LED լուսավորություն և արևային էներգիայի համակարգեր): Երևանի մանկապարտեզների ծրագիրը կնվազեցնի ածխածնի երկօքսիդի արտանետումները տարեկան 5 502 տոննայով և կբարելավի **34 500 երեխաների, դաստիարակների և անձնակազմի անդամների** կյանքը: Այդ աշխատանքը հնարավոր է դարձել **5 միլիոն եվրո** արժողությամբ դրամաշնորհի միջոցով Արևելյան Եվրոպայի Էներգաարդյունավետության և բնապահպանական գործընկերության շրջանակներում:

## ԿԵՆՏՐՈՆԱՆԱԼՈՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՎՐԱ.

Արևելյան գործընկերության տարածաշրջանում ԵՆԲ-ն ֆինանսավորում է մի քանի ծրագրեր՝ իրականացնելու էներգաարդյունավետության միջոցառումներ շենքերի և քաղաքային ջեռուցման համակարգերի համար: Ի լրումն վարկավորմանը, ԵՆԲ-ն ստեղծել է խորհրդատվական գործիք (Քաղաքային աջակցության ծրագրերի մեխանիզմ կամ ՔԱԾՄ, որը ֆինանսավորվում է Հարևանության ներդրումային հիմնադրամի կողմից), որն աջակցում է կայուն էներգիա ունենալու միջոցառումներին և կլիմայի պահպանության գործողություններին ամբողջ տարածաշրջանում:

## ՊԱՇՏՊԱՆԵԼՈՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ԱՋԱԿՑԵԼՈՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐԵՑՄԱՆԸ

Սկսած 2009 թվականից տարածաշրջանում ԵՆԲ-ն աջակցել է մի քանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրերի, որոնց ընդհանուր ներդրումը կազմել է 572 միլիոն եվրո: Բանկն օգնել է բարելավել ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակը համայնքների համար՝ թույլ տալով երկրներին համապատասխանել առողջապահական և բնապահպանական ազգային և միջազգային կանոնակարգերի պահանջներին՝ միաժամանակ բարելավելով տվյալ վայրի շրջակա միջավայրը:

### Ծրագրի ամփոփ նկարագիր.

- **104,6 միլիոն եվրո արժողությամբ ԵՆԲ վարկն** աջակցում է Վրաստանում ջրամատակարարման համակարգերի ընդլայնմանը, վերակառուցմանը և վերականգնմանը: Վարկի թիրախներն են երկու խոշոր ծրագիր Քութաիսիում և մի քանի ավելի փոքր ծրագրեր Ուռեկիում, Զուգդիդիում և Փոթիում, որոնք ավելացնում են անվտանգ խմելու ջրի հասանելիությունը: Ծրագիրը, որը նաև կենտրոնանում է ծածկույթի ծառայության և որակի վրա, դրամաշնորհային ֆինանսավորում է ստացել Հարևանության ներդրումային հարթակից տեխնիկական ստուգումների համար:

# ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ԵՆԲ-ն աջակցում է Արևելյան գործընկերության երկրների ջանքերին, որոնք ուղղված են ճգնաժամերի և ցնցումների նկատմամբ իրենց դիմացկունությունը բարձրացնելուն՝ միաժամանակ պահպանելով ուժեղ աճ: Բանկը ներդրումներ է կատարում ծրագրերում՝ բարձրացնելու կենսական պայմանների մակարդակը, համապատասխանելու հիմնական վարչական կարիքներին և խթանելու բնակիչների և տեղահանված անձանց տնտեսական նախաձեռնությունները: Ուկրաինայում Բանկը ֆինանսավորում է վերջին բախումներից հետո երկրի վերակառուցմանն ուղղված գործողությունները՝ աջակցելով կարճաժամկետ վերականգնումը և վերականգնելով հիմնական ծառայությունները և առանցքային ենթակառուցվածքները:

### Ծրագրի ամփոփ նկարագիր.

- Ուկրաինայի Վաղ վերականգնման ծրագիրը տրամադրում է **200 միլիոն եվրո՝ ֆինանսավորելու ներդրումները** կառավարության կողմից վերահսկվող Դոնեցկի և Լուգանսկի շրջաններում և Խարկով, Դնեպր և Զապորոժյե քաղաքների հարակից տարածքներում: ԵՆԲ-ի ֆինանսավորումն օգնում է երկրի ներսում տեղահանված անձանց զգալի ներհոսք ունեցող շրջաններում գտնվող քաղաքներին ավելի լավ կառավարել սոցիալական ենթակառուցվածքի և կացարանների հանդեպ ճնշումը: Վարկն աջակցում է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների, էլեկտրամատակարարման և ջեռուցման ծառայությունների վերաստեղծմանն ու բարելավմանն ուղղված ջանքերը: Այն նաև ֆինանսավորում է վնասված հանրային շենքերի վերազինումը՝ ներառյալ վարչական շենքերը, դպրոցները, կլինիկաները և հիվանդանոցները և սոցիալական այլ ենթակառուցվածքները:

- Բանկը Մոլդովայի Հանրապետությանը տրամադրել է **2 միլիոն եվրո արժողությամբ տեխնիկական աջակցություն** ջրհեղեղների կանխարգելման և պաշտպանության հիմնական պլանի, ինչպես նաև աշխարհագրական տեղեկատվական համակարգի հիման վրա գետերի կառավարման և դիտարկման համակարգի ստեղծման համար: Տեխնիկական աջակցությունը նաև օգնում է ի հայտ բերել ներդրումային ծրագրեր, որոնք ապահովում են պաշտպանություն ջրհեղեղներից, ինչպիսիք են պաշտպանության տեխնիկական միջոցները ջրհեղեղներից, ջրհեղեղի դեպքում պահեստավորումը և գետերի տարողունակության բարձրացումը: Ծրագիրը ֆինանսավորվում էր ԵՆԲ-ի կողմից կառավարվող Արևելյան գործընկերության տեխնիկական աջակցության թրասթ հիմնադրամի դոնորների կողմից:



# ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՆԲ-ն ֆինանսավորում է կրթական ոլորտի ծրագրեր: Բարձրագույն և հանրային կրթության լավ ենթակառուցվածքը բարելավում է ուսուցման և դասավանդման միջավայրը և քաջալերում է հետազոտությունները և նորարարությունը: Կրթությունը կենսական նշանակություն ունի մարդկային կապիտալի զարգացման համար, որն իր հերթին հանգեցնում է եկամուտների, արտադրողականության և զբաղվածության աճին: Մեր ծրագրերն օգնում են համապատասխանեցնել ստանդարտները Եվրոպական միությունում կիրառվող ստանդարտներին:

**Ծրագրի ամփոփ նկարագիր.**

- Ուկրաինայի բարձրագույն կրթության ծրագիրը ֆինանսավորել է դասավանդման, հետազոտական և օժանդակ առկա շինությունների վերազինումը 21 համալսարանում՝ բարելավելու դրանց էներգաարդյունավետությունը և ուսանողների հարմարավետությունը: Ի լրումն **160 միլիոն եվրո արժողությամբ ներդրմանը**, ծրագիրը նաև ստացել է Եվրոպական միության դրամաշնորհային աջակցություն Հարևանության ներդրումային հարթակից և Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և բնապահպանական գործընկերությունից:

# ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## ՀԱՅԱՍՏԱՆ

### ԵՆԲ-Ի ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ՝ 404 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ

Մ6 միջպետական մայրուղու վերականգնումը (51 միլիոն եվրո) վերաբերում է Հայաստանի կենսական տրանսպորտային միջանցքին, որը նաև երկիրը կապում է Վրաստանի և արտաքին աշխարհի հետ: Այս ճանապարհը կրում է Հայաստանի միջազգային երթևեկության ավելի քան 60%-ը և հատկապես կարևոր է Հայաստանի միջազգային առևտրի համար: Զուգահեռաբար ԵՆԲ-ն կսկսի ԵՄ-ի կողմից աջակցություն ստացած ծրագիր՝ երկրում ճանապարհային երթևեկության անվտանգությունը բարելավելու համար:

## ԱԴՐԲԵՋԱՆ

### ԵՆԲ-Ի ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ՝ 96 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ

ԵՆԲ-ն տրամադրում է 25 միլիոն եվրո փոքր և միջին ձեռնարկություններին աջակցելու համար: Ֆինանսավորումը բաշխվում է AccessBank-ի միջոցով, որը փոքր բիզնեսներին ֆինանսավորող՝ Ադրբեջանում առաջատար ֆինանսական հաստատություն է: Այս գործողությունը կխթանի մասնավոր հատվածի զարգացումը՝ Ադրբեջանում նպաստելով աշխատատեղերի ստեղծմանը և կենսամակարդակի բարձրացմանը:





## ԲԵԼԱՌՈՒՍ

### ԵՆԲ-Ի ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ՝ 159 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ

ԵՆԲ-ի 84 միլիոն եվրո արժողությամբ վարկը կնպաստի Մինսկում մոտ երկու միլիոն քաղաքացիներին մատուցվող ջրահեռացման ծառայությունների վերազինմանը: Այս վարկը կվճարի նախնական վերամշակման նոր կառույցների, կենսաբանական մշակման համար նոր աէրացիոն ռեզերվուարների, կեղտաջրերի ուլտրամանուշակագույն ախտահանման և նստվածքի ժամանակակից վերամշակման ներդրմանը: Ներդրումները կբարելավեն էներգաարդյունավետությունը, երկրի շրջակա միջավայրը և մարդկանց առօրյա կյանքը:



## ՎՐԱՍՏԱՆ

**ԵՆԲ-Ի ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ՝ 1,8 ՄԻԼԻԱՐԴ ԵՎՐՈ**

Քաղաքային վերակառուցմանը և զարգացմանն ուղղված 50 միլիոն եվրոյի ֆինանսավորումն ուղղված կլինի 2015 թվականին Թբիլիսիում և հարակից տարածքներում տեղի ունեցած ավերիչ ջրհեղեղների հասցված վնասի վերականգմանը: Այս ծրագիրը կօգնի վերականգնել հիմնական ծառայությունները՝ վերակառուցելով առանցքային ենթակառուցվածքը և հիմք ստեղծելով տնտեսության վերականգման համար:

## ՄՈԼԴՈՎԱ

**ԵՆԲ-Ի ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ՝ 755 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ**

24 միլիոն եվրո արժողությամբ վարկը կօգնի վերականգնել ջրամատակարարման ծառայությունները և կեղտաջրերի հավաքման և մշակման կառույցները Քիշնևում՝ ուժեղացնելով ջրամատակարարման ծառայությունների որակը, արդյունավետությունը և կայունությունը և բարելավելով 800 000 քաղաքացու կյանքի որակը: Այս ներդրումը կկրճատի ջրի հոսակորուստները և էներգիայի սպառումը:





## ՈՒԿՐԱԻՆԱ

**ԵՆԲ-Ի ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ՝ 5,5 ՄԻԼԻԱՐԴ ԵՎՐՈ**

75 միլիոն եվրո արժողությամբ շրջանակային վարկի միջոցով Բանկը ֆինանսավորում է քաղաքային երթևեկության ենթակառուցվածքը՝ բարելավելու վարորդների և մասնավորապես ճանապարհային երթևեկության այնպիսի խոցելի մասնակիցների՝ ինչպիսիք են հետիոտների ու հեծանվորդների ճանապարհային անվտանգությունը: Ի լրումն բարելավված ճանապարհային երթևեկության անվտանգության և նվազած պատահարների, ներդրումն ունի ճանապարհային երթևեկության ցածր մակարդակի անվտանգության անուղղակի ծախսերի կրճատման ներուժ: Տեխնիկական աջակցության համար ծրագիրն օգտվում է ԵՄ-ի ֆինանսավորումից:

**ԵՆԲ-ն Եվրոպական միության բանկ է, որը պատկանում է ԵՄ անդամ պետություններին: 2018 թվականին ԵՆԲ-ի խումբը մոտ 80 միլիարդ եվրո արժողությամբ ներդրումներ է տրամադրել Եվրոպայում և Եվրոպայի սահմաններից դուրս: Մենք աշխարհի խոշորագույն բազմակողմանի վարկառու և վարկատու կազմակերպությունն ենք:**

European Investment Bank
The EU bank

EaP Eastern Partnership


**Եվրոպական ներդրումային բանկ**
Կոնռադ Ադենաուերի ճեմուղի 98 -100
L-2950 Լյուքսեմբուրգ
+352 4379-1
**www.eib.org**

twitter.com/EIB
facebook.com/EuropeanInvestmentBank
youtube.com/EIBtheEUbank

**Լայնել Ռապեյ**
Պետական հատվածի վարչության պետ
+352 4379-86872
l.rapaille@eib.org – OPS_NC-2@eib.org

**Նատալի Կլիմանս**
Մասնավոր հատվածի-կորպորատիվ վարչության պետ
+352 4379-86709
n.climence@eib.org – OPS_NC-3@eib.org

**Մարիոն Հյոնիկե**
Մասնավոր հատվածի-բանկերի վարչության պետ
+352 4379-87406
m.hoenicke@eib.org – OPS_NC-4@eib.org

**Անտոնիո ԿԱՍՏԻԼԼՈ**
Մոլդովայի Հանրապետությունում ԵՆԲ-ի գրասենյակի ղեկավար
Մոլդովայի Հանրապետություն, Վլայցու Պիռալաքի փ. 63
MD-2012 Քիշնև
+373 2280-7277
+373 2280-7220
chisinau@eib.org

**Մասիեժ ՍԶՈՒՐԱ**
Հարավկովկասյան տարածաշրջանում ԵՆԲ-ի տարածաշրջանային գրասենյակի ղեկավար
Ազատության հրապարակ, Գ. Տաբիձեի փ. 1
0105 Թբիլիսի
Վրաստան
+99 3220-6284
tbilisi@eib.org

**Ժան-Էրիկ դե ԶԱԳՈՆ**
Ուկրաինայում ԵՆԲ-ի գրասենյակի ղեկավար
Վոլոդիմիրսկայի փ. 101
UA-01033 Կիև
+380 4439-08018
+352 4379-67495
kiev@eib.org


08/2019 HY Images: © EIB, Shutterstock